ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2013-4-2-Ա

ք. Երևան 11.11.2013թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2013 թվականի հոկտեմբերի 30-ի նիստում քննարկեց 2013 թվականի սեպտեմբերի 6-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Մարկետ-Ա» ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «Manzoni» (հայտ No20121188) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 107-րդ մասի 14-րդ կետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված «MANZONI» բառային ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթություն է առաջացնում նույնատիպ ապրանքների համար՝ http://www.manzoniwines.com և http://www.manzonibianco.com կայքերում գովազդվող իտալական «MANZONI» ապրանքային նշանի նկատմամբ, որը ստեղծել է իտալացի՝ գյուղատնտեսական գիտությունների պրոֆեսոր, գինեգործ Լուիջի Մանզոնին (1888-1968թթ.): Նա՝ սերելով տարբեր տեսակի խաղողները ստացել է մի նոր տեսակ, որն էլ անվանել է «Մանզոնի»:

Հետագայում ստեղծվել են տարբեր տեսակի գինիներ «MANZONI» անունով: Լուիջի Մանզոնին Կոնելյանո քաղաքում (Իտալիա) ստեղծել և ղեկավարել է փորձագիտա-հետազոտական կենտրոնը խաղողագործության և գինեգործության գծով և 70 հրապարակումների ու աշխատությունների հեղինակ է: Այսօր Իտալիայում կան Մանզոնի ընտանիքին պատկանող խաղողի մեծ այգիներ և գինետներ, իսկ «MANZONI» անունով գինիները հայտնի են և արտահանվում են աշխարհի տարբեր երկրներ՝ Միացյալ Նահանգներ, եվրոպական երկրներ և ընդլայնվելու միտում ունեն:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու մասին, քանի որ ներկայացված հայտարարությունը չի կարող հիմք հանդիսանալ «Manzoni» ապրանքային նշանի գրանցման համար:

Բողոքարկման խորհուրդը քննարկման արդյունքում եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի կողմից ներկայացված հայտարարությունը բավարար չէ բողոքը բավարարելու համար:

Համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Մարկետ-Ա» ընկերության «Manzoni» ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

Բողոքարկման խորհրդի նախագահ Գ. Մելքոնյան